ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-------» ապրիլի 2011թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N612-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N983-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N612-Ա որոշմանը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի «Մի շարք առևտրային կազմակերպությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները, դրանց կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N983-Ա որոշման N10 հավելվածով հաստատված հաստիքացուցակի «7. Վարչատնտեսական բաժին» մասով նախատեսված «հերթապահ-հավաքարար», «հավաքարար (զուգարանի)», «բանվոր» և «բանվոր մեքենավար» հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերն ավելացնել 15 հազարական դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N612 -Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի N612-Ա որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գործառույթների և կատարվող աշխատանքների որակի ապահովմամբ:

Երևանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի գործունեության հիմնական ուղղությունը Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի շահագործումն ու սպասարկումն է: Շենքը ինքնին հանդիսանալով բարդ տեխնիկական կառույց և ունենալով քաղաքի համար կարևոր նշանակություն՝ պահանջում է սպասարկման և շահագործման բարձր որակ և զգալի ֆինանսական ծախսեր:

Ընկերության ներկայացրած հաստիքային ցուցակում անմիջականորեն քաղաքապետարանի վարչական շենքի սպասարկմամբ և շահագործմամբ զբաղված աշխատողների թիվը կազմում է 58 մարդ, որոնց միջին ամսական աշխատավարձը կազմում է 54.7 հազ. դրամ:

Ընկերության գործունեության հաջորդ կարևոր ոլորտն է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված, առանձին կանգնած 280 ջերմամատակարարման օբյեկտների և 35 մեքենա-մեխանիզմների պահպանումը և սպասարկումը: Այդ նպատակի համար ներկայացված հաստիքացուցակում ընդգրկված են 64 մարդ, որոնց միջին ամսական աշխատավարձը կազմում է 35.5 հազ. դրամ: Նախատեսված 64 աշխատողներից 41-ը հսկիչներ /պահակներ/ են: Երևանի քաղաքապետի 2009թ. օգոստոսի 27-ի թիվ 105-Ա կարգադրության համաձայն 2009թ. սեպտեմբեր ամսից ընթանում են ջերմամատակարարման օբյեկտների գույքի ապամոնտաժման և պահեստավորման աշխատանքները: Այս հանգամանքը թույլ տվեց 01.01.2011թ. դրությամբ զգալիորեն կրճատել ջերմամատակարարման համակարգի գույքի պահպանման և սպասարկման ծախսերը: Այսպես, եթե 2010թ. հաստատված հաստիքացուցակով այդ նպատակի համար նախատեսված էր 98 հաստիք, տարեկան 38.2մլն. աշխատավարձի ֆոնդով, ապա 2011թ. համար նախատեսվում է 64 հաստիք՝ տարեկան 27.3 մլն. դրամ աշխատավարձի ֆոնդով, որը տարվա ընթացքում նվազման միտում կունենա՝ կապված դրանց հնարավոր օտարման հետ: Ընդ որում, ապամոնտաժված կաթսայատների շենքերի հսկողությունը նախատեսում է իրականացնել 8-10 շենքերի համար՝ մեկ շրջիկ հսկիչի միջոցով:

Ըստ նախնական հաստատված ծրագրի՝ 2011թ. 2-րդ եռամսյակից նախատեսվում է Փ. Բուզանդի 1/3 շենքի քաղաքապետարանի հատվածի շահագործումը: Այդ նպատակի համար Երևանի բյուջեից ընկերությանը հատկացվել է 38.1մլն. դրամ: Ուստի 2-րդ եռամսյակից Փ. Բուզանդի 1/3 շենքը սպասարկող անձնակազմի թվաքանակը կավելացվի 16-ով, որը թույլ կտա բարձր որակով և արդյունավետությամբ կազմակերպել քաղաքապետարանի հատվածի սպասարկումը և շահագործումը:

Ընկերությունը նաև իրականացնում է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող Փ. Բուզանդի 1/3 շենքում գտնվող վարձակալների սպասարկումը: Այդ գործունեությունն ինքնածախսածածկվող է և բյուջետային միջոցներ չի պահանջում:

Ընկերության կողմից նույն կարգով իրականացվում է նաև Երևանի քաղաքապետարանի աշխատողների հասարակական սննդի կազմակերպման գործունեությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N612-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի N612-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N612-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի N612-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ